

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Դավիթ Հարությունյանի «Շաուֆլերյան տիպի թեորեմներ» ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի Ա.01.06 «Հանրահաշիվ և թվերի տեսություն» մասնագիտությամբ գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Դավիթ Հարությունյանի հետազոտությունը առնչվում է երկրորդ կարգի տրամաբանական լեզվին և նրա բանաձևերին, որը իր հերթին համարվում է ժամանակակից հանրահաշիվի, մաթեմատիկական տրամաբանության և հանգունակների տեսության արդիական խնդիրներից:

Առաջին գլխում սահմանվում են բաժանումով ռեզուլյար երկտեղանի հանրահաշիվի և r-հանրահաշիվի գաղափարները: Ստացվում են զուգորդականության, մեղիալության և պարամեղիալության երկրորդ կարգի նույնություններին բավարարող երկտեղանի հանրահաշիվների Էնդո-գծայնությունը երկտեղանի խմբին, որը Վ. Բելուսովի և Յու. Մովսիսյանի կողմից հակադարձելի հանրահաշիվներում ստացված արդյունքների ընդհանրացումներն են: Օգտվելով Էնդո-գծայնության արդյունքներից ապացուցվում են Շաուֆլերյան տիպի թեորեմներ բաժանումով ռեզուլյար երկտեղանի հանրահաշիվների համար, որոնք բավարարում են զուգորդականության, մեղիալության և պարամեղիալության երկրորդ կարգի նույնություններին:

Երկրորդ գլխում դիտարկվում են բաժանումով ռեզուլյար n-տեղանի հանրահաշիվներ, որոնք բավարարում են զուգորդականության ընդհանրացված երկրորդ կարգի նույնություններին և պարամեղիալության գերնույնությանը: Ստացվում են գծայնության թեորեմներ բաժանումով ռեզուլյար n-տեղանի հանրահաշիվների համար, որոնք բավարարում են զուգորդականության ընդհանրացված նույնությանը, որն իր հերթին հանդիսանում է Յա. Ուշանի n-տեղանի հակադարձելի հանրահաշիվների արդյունքի ընդհանրացումը: Օգտվելով ստացված գծայնության արդյունքներից ապացուցվում է Շաուֆլերյան տիպի թեորեմ այդ հանրահաշիվների համար ևս: Ինչպես նաև ապացուցվում է պարամեղիալության գերնույնությանը բավարարող բաժանումով ռեզուլյար n-տեղանի հանրահաշիվների գծայնությունը աբելյան խմբին:

Թեզում ստացված հիմնական արդյունքները հետևյալն են՝

1. Բաժանումով ռեզուլյար երկտեղանի հանրահաշիվների և r-հանրահաշիվների նկարագրումը զուգորդականության, մեղիալության և պարամեղիալության երկրորդ կարգի նույնություններով, որոնք ստացվում են Էնդո-գծային որևէ խմբի նկատմամբ:
2. Շաուֆլերյան տիպի թեորեմների ձևակերպումը և ապացուցումը բաժանումով ռեզուլյար երկտեղանի հանրահաշիվներում:
3. Բաժանումով ռեզուլյար n-տեղանի հանրահաշիվների նկարագրումը զուգորդականության երկրորդ կարգի նույնություններով, որոնք կլինեն Էնդո-գծային որևէ խմբի նկատմամբ:
4. Շաուֆլերյան տիպի թեորեմների ձևակերպումը և ապացուցումը բաժանումով ռեզուլյար n-տեղանի հանրահաշիվներում:
5. Բաժանումով ռեզուլյար n-տեղանի հանրահաշիվների նկարագրումը պարամեղիալության գերնույնությունով, որոնք ստացվում են Էնդո-գծային աբելյան խմբի նկատմամբ:

Ատենախոսության թերությունները վերաբերում են որոշ տառասխալների և վրիպակներ, ինչպես նաև, չնայած ատենախոսությունում ներկայացված որոշ օրինակների, այնուամենայնիվ ցանկալի կլիներ դրանց քանակը շատացնել, մասնավորապես, երբ բերվում են որոշակի պայման(ներ)ի բավարարող հանրահաշիվների վերաբերյալ թեորեմներ, ցանկալի կլիներ տեսնել այդ պայմաններին բավարարող հանրահաշիվների օրինակներ:

Նշված թերությունները սակայն չեն ազդում աշխատանքի ընդհանուր գնահատականի վրա, և գտնում եմ, որ Դավիթ Նորիկի Զարությունյանի «Շառֆլերյան տիպի թեորեմներ» վերնագրով ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ նրա հեղինակ Դավիթ Նորիկի Զարությունյանը արժանի է Ա.01.06 «հանրահաշիվ և թվերի տեսություն» մասնագիտությամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
Ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու՝

Մ. Ա. Յուլյան

*Վ. Մ. Յուլյանի պարագրաֆների
իսկապարհում էմ*

Մ. Գ. Ք. Գ. Մ. Յուլյանի պարագրաֆների

